Այցելություն Շուշիի հերոսներին

Այս օրերին զինվորական հոսպիտալ է հիշեցնում Երևանի № 8 հիվանդանոցի դիմածնոտային բաժանմունքը, որի հիվանդասենյակներում ներկայումս պահանջվող բուժօգնություն են ստանում Շուշիի ազատագրման ժամանակ ծանր վիրավորված 11 ազատամարտիկներ:

Մի քանի օր է, ինչ առավոտից երեկո բաժանմունք են այցելում մեր հայրենակիցները՝ անծանոթ քաղաքացիներ Երևանից, հանրապետության շրջաններից: Վիրավոր մարտիկներին ուտելիք են բերում, մրգեր, ծաղիկներ, նաև՝ դրամ: Այդ օրը գթասրտության հերթական քայլ էին կատարել Երևանի պետավտոտեսչության աշխատակիցները՝ բաժանմունքի վիրավորներին փոխանցելով 4100 ռ., իսկ Արտաշատի շրջանի Արնշատ գյուղի սրտացավ մայրերը՝ Թինա Խաչատրյանը, Հրանուշ Սահակյանը, Գեղեցիկ Արտաշեսյանը և Թամարա Մալխասյանը բաժանմունք մտան շնչակտուր՝ ձեռքներին սննդամթերքներով լի ծանր պայուսակներ: Շուշիի ազատագրման լուրն առնելուն պես Նոր Արեշի № 22 թաղային կոմիտեի նախագահ Շաքե Վարդապետյանի և բնակիչ Անդրանիկ Բարսեղյանի նախաձեռնությամբ էլ թաղամասի բնակիչները ընդամենը մեկ օրում հանգանակեցին 84 հազար ռ. գումար՝ վիրավոր մարտիկներին դրամական օգնություն ցույց տալու համար:

Բաժանմունքի պրոֆեսոր Սարգիս Անանյանը ստեղծել է Արցախի մարտերում վիրավորված ազատամարտիկների օգնության ֆոնդ, և փաստորեն արեշցիների հանգանակած 84 հազար ռուբլին հիշյալ ֆոնդում հաշվառվելուց հետո առձեռն տրվեց 11 ազատամարտիկներին՝ յուրաքանչյուրին 8 հազար ռուբլու չափով: Բացի այդ, հիվանդանոց էր բերվել նաև հազար ռուբլու միրգ:

Բնակիչները կարողացան մասհանումներ կատարել իրենց սուղ խնայողություններից. Անդրանիկ Բարսեղյանը տրամադրեց հինգ հազար ռուբլի, իսկ նրա ընկերները, որոնք՝ ի դեպ, թաղամասի բնակիչներ չեն՝ 10 հազար 500 ռ.: Խաթուն Առաքելյանը և Սերյոժա Հարությունյանը հազարական ռ. նվիրեցին, «Դսեղ» կոոպերատիվը՝ 2 հազար և այլն:

— Ուզում եմ կոչ անել իմ համաքաղաքացիներին,— զրույցի ընթացքում ասաց Երքաղխորհրդի պատգամավոր Լ. Միրզոյանը,— յուրաքանչյուր թաղամաս հետևի մեր օրինակին և ստանձնի տարբեր հիվանդանոցների՝ նմանօրինակ օգնության կարիք զգացող բաժանմունքների շեֆությունը:

Ինչ խոսք, գովեստի և ընդօրինակման է արժանի նորարեշցիների նախաձեռնությունը: Արժե նշել նաև, որ մեկ ամիս առաջ էլ դարձյալ Արցախի ազատամարտիկներին օգնելու համար թաղամասի բնակիչները հանգանակեցին 28 հազար ռուբլի, որով ձեռք բերված ֆիլտրով սիգարետի խմբաքանակն ուղարկվեց Արցախ:

— Որոշել ենք գործնական օգնություն ցուցաբերել նաև Հայաստանի սահմանային շրջաններում վիրավորված մարտիկներին,— խոսքը շարունակում է Լ. Միրզոյանը:— Այդ նպատակի համար հանգանակած 15 հազար ռուբլին էլ առաջիկայում կտանենք Տաուշի շրջան, որտեղ, ինչպես գիտեք, իրադրությունը ծայրաստիճան լարված է ու պայթունավտանգ: Ի դեպ, պրոֆեսոր Անանյանը խոստացել է միանալ մեզ և բուժանձնակազմը գլխավորել Տաուշ: Իսկ մինչ այդ մեր թաղամասում հաշվառում ենք հանրապետության սահմանային շրջաններից էվակուացված մարդկանց՝ նրանց ևս դրամով և սննդամթերքով օգնելու համար...

Բ. ՎԱՐՈՒԺԱՆՅԱՆ